ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խանջյան հեռ. 6-92-96

01-50

20.դեկտեմբեր .2016թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն՝ Ա. Ղահրամանյանին

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՐՀԱՄԱՆՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Խանջյան համայնքի 13 դեկտեմբերի 2016 թվականին կայացած ավագնու N 8 նիստի որոշումները:

Առդիր 8 էջ:

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԱՎԱԳՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1/2222/4585-16
21 / 12 / 2016 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 8 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 25

13. դեկտեմբերի.2016թ. գ. Խանջյան

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Խանջյան համայնքի ավագանու N 8 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	Կողմ (ստ.)	Դեմ (ստ.)	Ձեռնպահ (ստ.)
1. Ավագյան Շանթ		—	—
2. Արոյան Ավետիք		—	—
3. Գենջոյան Աբրահամ		—	—
4. Եղիազարյան Արմեն		—	—
5. Թովմասյան Կամո		—	—
6. Խաչատրյան Հովհաննես		—	—
7. Միրզախանյան Երվանդ		—	—

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված
Խանջյան համայնքի ավագանու
13. դեկտեմբերի 2016 թվականին
կայացած N 8 նիստի N 25 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1.Նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկուցող _____ Ս. Զաքարյան:

2. ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2016-2021 թվականների ծրագիրը հաստատելու մասին:

Զեկուցող _____ Ս. Ավագյան:

3. ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Զեկուցող _____ Կ. Բունիաթյան:

4. Հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Զեկուցող _____ Ա. Արոյան:

5. Գույքահարկի զեղչ կատարելու մասին :

Զեկուցող _____ Ս. Միրզախանյան:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 3 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 26

13. դեկտեմբերի.2016թ. Գ. Խանջյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով

Ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2016-2021 թվականների հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը:

ավագանու անդամներ	*Կողմ (ստ)*	*Դեմ(ստ)*	*Ձեռնպահ(ստ)*
Ավագյան Շանթ		—	—
Արոյան Ավետիք		—	—
Գենջոյան Աբրահամ		—	—
Եղիազարյան Արմեն		—	—
Թովմասյան Կամո		—	—
Խաչատրյան Հովհաննես		—	—
Միրզախանյան Երվանդ		—	—

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ս. ԱՎԱԳՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 13» դեկտեմբերի 2016թ. թիվ 27 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի 2017 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 40197.9 հազար դրամ, ծախսերի գծով՝ 40197.9 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

4

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ավագյան Շանթ
2.Արոյան Ավետիք
3.Գենջոյան Աբրահամ
4.Եղիզարյան Արմեն
5.Թովմասյան Կամո
6.Խաչատրյան Հովհաննես
7.Միրզախանյան Երվանդ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՎԱԳՅԱՆ

2016 թվականի Դեկտեմբերի 13

գ. Խանջյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 8 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 28

13. դեկտեմբերի.2016թ. Գ. Խանջյան

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 60-րդ և ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշման 50.1 կետերով՝

Ավագանին որոշում է

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություններին, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող 0.03 հա (ծածկագիր 018-019) արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքը փոխադրել բնակավայրի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Համայքնի ղեկավարին՝ կազմել համապատասխան գործ և ներկայացնել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ իրավունքի պետական գրանցում ստանալու համար:
3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի գլխավոր հատակագծում փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող ջրաբաշխիչ աշտարակի զբաղեցրած բնակավայրի ընդհանուր օգտագործման հողերից 0.1076 հա (ծածկագիր 0004-) հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների հողերի:
4. Համայնքի ղեկավարին՝ կազմել և միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

6

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 8 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N 29

13. դեկտեմբերի.2016թ. Գ. Խանջյան

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԵՂՉ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Գույքահարկի մասին" օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով ներկայացված դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ավագանին որոշում է

1. Կատարել գույքահարկի զեղչ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ավագանու անդամներ	*Կողմ (ստ)*	*Դեմ(ստ)*	*Ձեռնպահ(ստ)*
Ավագյան Շանթ		—	—
Արոյան Ավետիք		—	—
Գենջոյան Աբրահամ		—	—
Եղիազարյան Արմեն		—	—
Թովմասյան Կամո		—	—
Խաչատրյան Հովհաննես		—	—
Միրզախանյան Երվանդ		—	—

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ս. ԱՎԱԳՅԱՆ*

Հավելված
Խանչյան համայնքի ավագանու
13 դեկտեմբերի 2016 թվականին
կայացած N 8 նիստի N 29 որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԵՂՉՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ավագյան Շանթ Հայսերի __ ВАЗ 21011 20 ОЅ 185 ___ 7500 դրամ:

8